Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(6), 2020

«Գիտական Արցախ» *պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

«Գիտական Արցախ» *պարբերականը կետեղված է www.elibrary.ru կայքում:*

*The **«Scientific Artsakh»** journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*The **«Scientific Artsakh»** journal is posted on www.elibrary.ru website.*

*Журнал **«Научный Арцах»** включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).*

*Журнал **«Научный Арцах»** размещен на сайте www.elibrary.ru.*

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝
Լենա ԱՍՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր **(Տառագոնա, Իսպանիա)**
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Կոստրոմա, ՌԴ)**
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Ժնև, Շվեյցարիա)**
Սեյրան ԶԱՔԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Օլշտին, Լեհաստան)**
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Մինսկ, Բելառուս)**
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ)**
Օտտո ԼՈՒԽՏԵՐՀԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Համբուրգ, Գերմանիա)**
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Լվով, Ուկրաինա)**
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Դոնի Ռոստով, ՌԴ)**
Գարիկ ՔԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ՔՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3(6), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 288 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 3-րդ (6-րդ) համարի տպագրությանն աջակցել է «SBS» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

ISSN 2579-2652

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2020

Published by the Yerevan State University Academic Council Decision

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN,** Ph.D in Philology, Associate Professor

Members:
Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain)**
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia)**
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine)**
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor **(Minsk, Belarus)**
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor **(Moscow, Russia)**
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany)**
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor **(Rostov-on-Don, Russia)**
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor **(Geneva, Switzerland)**
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor **(Olsztyn, Poland)**

Scientific Artsakh, № 3(6), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 288 pages.

The publication of the 3rd (6th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «SBS» LLC.

Издается решением учёного совета Ереванского государственного университета

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: **Арам СИМОНЯН,** директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: **Аветик АРУТЮНЯН,** кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: **Теймина МАРУТЯН,** кандидат филологических наук, доцент

Члены:
Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук **(Таррагона, Испания)**
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор **(Ростов-на-Дону, Россия)**
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент **(Львов, Украина)**
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор **(Кострома, Россия)**
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор **(Ольштын, Польша)**
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор **(Женева, Швейцария)**
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент **(Минск, Беларусь)**
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор **(Москва, Россия)**
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор **(Гамбург, Германия)**
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 3(6), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 288 страницы.

Номер 3(6) журнала «Научный Арцах» был отпечатан при содействии ООО «SBS».

Հովսեփ Բաբայան. Ռուսաստան և Թուրքիա. համագործակցության և մրցակցության միջև.....96
Hovsep Babayan. Russia and Turkey between Cooperation and Rivalry
Овсеп Бабаян. Россия и Турция: между сотрудничеством и соперничеством

Ժաննա Հարությունյան. Ֆրանսիայի արտաքին քաղաքական ռազմավարությունը հյուսիսային Աֆրիկայի պետությունների նկատմամբ 1970-1991թթ. 105
Zhanna Harutyunyan. The French Foreign Policy in the North African Countries in 1970-1991
Жанна Арутюнян. Французская внешняя политика по отношению к северо-африканским странам в 1970-1991 гг.

Մարինե Մովսիսյան. Ցանցերի դերը Հայաստանի Հանրապետության ժողովրդավարացման և ինստիտուցիոնալացման գործընթացներում.....111
Marine Movsisyan. The Role of Networks in the Processes of Democratization and Institutionalization of the Republic of Armenia
Марине Мовсисян. Роль сетей в процессах демократизации и институционализации в Республике Армения

Նորիկ Նորիկյան. Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության տնտեսական բաղադրիչի ապահովման հիմնահարցերը.....124
Norik Norikyan. Main Issues of Ensuring the Economic Component of Military Policy of the Republic of Armenia
Норик Норикян. Основные вопросы обеспечения экономической составляющей военной политики Республики Армения

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Վահե Թորոսյան. Խղճի ազատությունը անտիկ շրջանի իրավաքաղաքական մտքի համատեքստում.....131
Vahe Torosyan. Freedom of Conscience in the Context of the Legal-Political Thought of the Ancient Period
Ваге Торосян. Свобода совести в контексте право-политической мысли античного периода

Տիգրան Մարկոսյան. Կանխամտածված սնանկության հիմքով քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառման հիմնախնդիրները.....138
Tigran Markosyan. Problems of the Enforcement of Civil Liability on the Basis of Premeditated Bankruptcy
Тигран Маркосян. Проблемы применения гражданско-правовой ответственности на основе преднамеренного банкротства

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

Վահե Հակոբյան. Իբրահիմ Ալ-Հալաբին և «Ծովերի միաձուլում» աշխատությունը.....149
Vahe Hakobyan. Ibrahim Al-Halabi and «The Confluence of the Seas» Work
Ваге Акопян. Ибрагим Аль-Халаби и его произведение «Слияние Морей»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ*

ՀՏԴ 323.173

ՆՈՐԻԿ ՆՈՐԻԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն,
norikyanpastaban@mail.ru

Հետազոտության նպատակն է ներկայացնել ռազմական քաղաքականության տնտեսական հիմքերի և մրցունակ ինստիտուցիոնալ մոդելի ապահովման հիմնահարցերը: Նպատակից բխող խնդիրներն են՝ ուսումնասիրել ռազմական տնտեսության ինստիտուցիոնալացման գործընթացի հիմքերը, վերլուծել ՀՀ պաշտպանության բնագավառում տնտեսական հենքի բարեփոխումները, ինչպես նաև բացահայտել ռազմական քաղաքականության երաշխավորման գործում տնտեսական բաղադրիչի ու արդյունաբերական համալիրի ազդեցության շրջանակները:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են գիտահետազոտական շրջանակներում հիմնավորված ու գործնականում լայն կիրառում ունեցող ընդհանուր բնույթի՝ դիալեկտիկական և համակարգային, այնպես էլ մասնավոր, կոնկրետացվող նշանակության՝ իրավաքաղաքական վերլուծության, համեմատական, համակարգակառուցվածքային, վիճակագրական գնահատման մեթոդներ:

Վերլուծելով ՀՀ ռազմական տնտեսության զարգացման ինստիտուցիոնալ հիմքերն ու զարգացման համար անհրաժեշտ գործոնները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ պետության և մասնավոր հատվածի փոխազդեցության արդյունավետ համակարգի կառուցումը ենթադրում է բազմաթիվ միջոցառումների որոշում ու գնահատում, պլանավորում ու իրագործում, ռազմատնտեսական գործընթացների կարգավորման համընդգրկուն գործիքարանի ապահովում:

Հիմնաբառեր՝ *անվտանգություն, ռազմական քաղաքականություն, զինված ուժեր, տնտեսություն, ռազմարդյունաբերական համալիր, պլանավորում, կառավարում, մրցունակություն, արդիականացում:*

Ռազմական տնտեսությունը պաշտպանական-անվտանգային համակարգում

ՀՀ ազգային անվտանգության քաղաքականության և, մասնավորապես, պաշտպանական-անվտանգային համակարգի հիմնախնդիրների համատեքստում ընդգծված նշանակություն ունեն ռազմական ոլորտի տնտեսական հենքի զարգացման հնարավորությունները: Հարկ է փաստել, որ Խորհրդային Միության փլուզումից հետո նախաձեռնվեց երկբևեռ աշխարհից դեպի միաբևեռ աշխարհի անցման գործընթաց, ինչն, իր ավարտին չհասած, զուգորդվեց բազմաբևեռ աշխարհի ձևավորման բարդ ու

* Հոդվածը ներկայացվել է 12.05.2020թ., գրախոսվել՝ 12.05.2020թ., տպագրության ընդունվել՝ 20.09.2020թ.:

բազմաբնույթ գործընթացներով: Վերջինիս կարևոր բնութագրիչներից է այն, որ տնտեսական, քաղաքական ու ռազմական առաջատարի դերին են հավակնում միանգամից մոտ երկու տասնյակ պետություններ, ինչն իր հերթին հուշում է, որ համաշխարհային կենտրոնի փոխարեն ձևավորման, կայացման փուլում են «աշխարհն իրար մեջ բաժանած» մի քանի կենտրոններ: Զարգացող և զարգացած մյուս երկրներին մնում է կողմնորոշվել ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, ԵՄ-ի, Հնդկաստանի, Իրանի, Թուրքիայի և այլոց հետ ոչ միայն տարածաշրջանային առևտրատնտեսական, այլև ռազմավարական գործընկերության և դաշինքների ընտրության հարցում: Նման պետությունները մի կողմից ձգտում են առավելագույնս օգտագործել ժամանակակից բարձր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները՝ ՀՆԱ-ի աճի տեմպերի արագացման, սոցիալական խնդիրների կարգավորման, ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացման, իսկ մյուս կողմից՝ միջազգային տնտեսական կազմակերպություններում իրենց և դաշնակիցների միասնական կշիռը բարձրացնելու և ազդեցության ոլորտներն ընդլայնելու համար: Նման մրցակցությունն ուղղակիորեն առնչվում է բազմաբնույթ՝ քաղաքական, սոցիալական, բնապահպանական, ժողովրդագրական, տեղեկատվական և, իհարկե, ռազմական սպառնալիքներին[352]: Իսկ այս ամենի հիմքում ընկած է հակամարտությունների նյութատեխնիկական բազան՝ տնտեսությունը և դրա կարևոր բաղադրիչը՝ ռազմաարդյունաբերական համալիրը:

Այս առումով անվտանգության տնտեսական ապահովման արդյունավետության հիմնական չափորոշիչներ են հանդիսանում առկա ռեսուրսների պայմաններում ռազմական ներուժի մաքսիմալացումն ու ռազմական տնտեսության մասշտաբների մինիմալացումը (ռազմական սպառնալիքի մեծացման ժամանակահատվածում և պատերազմի վարման ընթացքում առաջնահերթությունը պետք է տրվի առաջին չափանիշին, իսկ խաղաղ ժամանակ՝ երկրորդին՝ հիմքում ունենալով նաև մարդու անհատական կողմնորոշումներն ու առաջնայնությունները՝ որպես ընդհանուր սոցիալականացման հենք[353]): Ռազմատնտեսական այսպիսի մեթոդաբանական մոտեցման կիրառումը կարճաժամկետ հատվածում համաձայնեցվում է տնտեսության արդյունավետության և ռազմական անվտանգության երկարաժամկետ չափանիշների հետ, քանի որ որքան բարձր է ռազմական տնտեսության գործունեության արդյունավետությունը, այնքան ցածր են (այլ հավասար պայմաններում) կատարվող ծախսերը, հետևաբար ավելին են տնտեսական աճի ու զարգացման համար:

Համաշխարհային փորձը վկայում է, որ ժամանակ առ ժամանակ առաջանում են հակասություններ, որոնք անհնար է հանգուցալուծել առանց ռազմական ուժի կիրառման: Նույնը պահանջվում է նաև պետության տնտեսական անվտանգությունն ապահովելու համար: Այս պայմաններում կարևոր հիմնահարցերից է այն, թե ինչպես կարելի է համապատասխանություն սահմանել ռազմաքաղաքական նպատակների և տնտեսական հնարավորությունների միջև, որն իր հերթին պահանջում է հաշվի առնել պատերազմի և տնտեսության հնարավոր փոխազդեցությունները: Ու թեև այս առումով ուսանելի է բազմաթիվ երկրների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իսրայելի, ՌԴ կուտակած փորձը, մեր համոզմամբ՝ յուրաքանչյուր երկիր պետք է հաշվի առնի խնդիրն արդյունավետ հանգուցալուծելու սեփական հնարավորությունները:

Ընդհանուր առմամբ, ոչ միայն ռազմատնտեսական գործընթացների կարգավորման, այլ նաև ամբողջ ռազմական տնտեսության զարգացման գրավականներից է ռազմատնտեսական պլանավորման գործիքակազմի

---

[352] **Մանասերյան Թ.**, Տնտեսական անվտանգություն. Ռազմավարության ուրվագծեր, Ե., ՀՀ ԳԱԱ, 2014, էջ 42-43:

[353] **Մարկոսյան Ա.**, Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Ե., Նորավանք ԳԿՀ, 2005, էջ 15:

կատարելագործումը: Այս առումով ԱՄՆ-ում և ԵՄ-ում պլանավորումը կառուցվում է ծրագրային-նպատակային մոտեցման հիման վրա, ինչն առաջինը ի հայտ է եկել նախորդ դարի 60-ական թվականներին ԱՄՆ-ում[354]: Ծրագրային-նպատակային մոտեցումը ենթադրում է գործողությունների հստակ հերթականություն՝ ներառյալ ռազմական ուժերի շինարարության նպատակների և խնդիրների որոշումը, առաջադրված նպատակներին հասնելուն ուղղված կոնկրետ ծրագրերի մշակումը և ձևավորված ծրագրերի իրագործման համար պահանջվող ռեսուրսների հաշվառումը: Այդպիսի մոտեցումը փոխկապում է ռազմական շինարարության պլաններն ու նպատակները դրանց հասնելու համար պետության կողմից հատկացվող ռեսուրսների հետ:

ՀՀ ռազմական տնտեսության զարգացման ինստիտուցիոնալ հիմքերի մշակման տնտեսական կողմնորոշիչների շարքում կարևորվում են ոչ միայն ներքին ներդրումային միջավայրի բարելավման ինստիտուցիոնալ ջանքերը, այլ նաև օտարերկրյա տեխնոլոգիական բազայի ընդօրինակման նպատակադրմամբ արտաքին տնտեսական քաղաքականության իրականացումը: Օրինակ՝ Չինաստանում 100%-ով օտարերկրյա ընկերությունների գործունեությունը թույլատրված է 100%-ով դրանց արտադրանքի արտահանման դեպքում: Ներքին շուկա դուրս գալու համար այդ ընկերությունները պետք է տեղական ընկերություններին փոխանցեն մտավոր սեփականության իրավունքը և բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը[355]:

Տվյալ փորձի և Հայաստանում ռազմական տնտեսության զարգացման նպատակադրման հաշվառմամբ՝ Հայաստանի ինստիտուցիոնալ համակարգը պետք է նպաստի (նաև նոր օրենսդրական ակտերի ընդունման միջոցով) արտասահմանյան տեխնոլոգիաների արդյունավետ ընդօրինակման քաղաքականության որդեգրմանը, այլ ոչ թե պատրաստի արտադրանքի մասսայական ներկրմանը:

Պետության և մասնավոր հատվածի միջև ռազմատնտեսական համագործակ–ցության, ինչպես և յուրաքանչյուր համագործակցության շարունակականության համար պահանջվում է ռիսկերի կառավարման արդյունավետ կառուցակարգերի ներդնում: Խաղաղ և պատերազմական վիճակում ռազմատնտեսական անվտանգության ապահովման պետական քաղաքականությունը կրում է արմատական փոփոխություններ: Խոսքը հիմնականում վերաբերում է գնումների քաղաքականությանը, որն ի տարբերություն պատերազմական ժամանակահատվածի՝ խաղաղ իրավիճակում կրում է լիբերալ բնույթ: Պատերազմի ժամանակահատվածում (այդ թվում՝ հյուծիչ պատերազմի, որում ՀՀ-ը փաստացի գտնվում է) ռազմատնտեսական ձեռնարկությունների նկատմամբ պետական պահանջները դառնում են ավելի կոշտ[356]: Մյուս կողմից, հենց պատերազմի ժամանակ այդ ձեռնարկությունները կարող են զրկվել իրենց արտադրանքի իրացման շուկաներից: Արդյունքում այդ ձեռնարկությունները կարող են կրել ֆինանսական կորուստներ:

ՀՀ-ում ռազմական տնտեսության ձևավորման և զարգացման գործում չափազանց կարևորվում է նաև ուղղահայաց իշխանական աստիճանակարգի արդյունավետությունը, որը ընդունակ կլինի իրականացնել ռազմական տնտեսության

---

[354] **Ерзнкян Б.А., Ставчиков А.И.,** Эволюционно-позитивная и революционно-нормативная составляющие институциональной динамики / Теория и практика институциональных преобразований в России. Сборник научных трудов, Центральный эконоико-математический институт РАН, 2015, С. 6-15, http://www.cemi.rssi.ru/publication/sborniki/erznkyan/yerz-vyp33.pdf.

[355] **Бляхман Л.**, Институциональные основы модернизации российской экономики, 2012, С. 7-17, https://cyberleninka.ru/article/n/institutsionalnye-osnovy-modernizatsii-rossiyskoy-ekonomiki.

[356] Այդ ձեռնարկությունների հանդեպ իմպերատիվ կարգով կարող են սահմանվել կոնկրետ ծավալով արտադրանքի արտադրության պահանջներ, ընդ որում՝ գնումների քաղաքականությունում սահմանելով ավելի ցածր գին, քան դա տեղի կունենար խաղաղ ժամանակահատվածում:

ռազմավարական կառավարումը, սահմանել ռազմավարական առաջնահերթություններ և որոշել հայեցակարգային-ռազմավարական պլանավորման հորիզոնները: Որոշ մասնագետների կարծիքով՝ դրան հասնելը հնարավոր է կառավարման և կոորդինացման բազմամակարդակ համակարգի ստեղծման միջոցով, որը կազմված կլինի կազմակերպական-կառավարչական կառուցվածքի բարձրագույն օղակներից, ինչպես նաև պետական նպատակային ծրագրերում կառավարիչների և պետական ու մասնավոր ձեռնարկությունների ներկայացուցիչներից[357]:

Ընդ որում, կառավարման և համակարգման բազմամակարդակ համակարգի հիմքում պետք է դնել արտաքին քաղաքականությունում ռազմավարական հավասարակշռության առաջնահերթության սկզբունքը: Այս համատեքստում Հայաստանը կարևորում է անվտանգության ու պաշտպանական բնագավառներում հայ-ամերիկյան, հայ-ռուսական, ինչպես նաև Հայաստան-ՀԱՊԿ, Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության ներդաշնակեցումը: Դա բացատրվում է նաև սփյուռքահայության գոյությամբ և Հայաստանի, ինչպես նաև իր բնակության երկրների (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա և այլն) քաղաքական կյանքի վրա նրա ունեցած որոշակիորեն ակտիվ ազդեցությամբ:

Ռազմարդյունաբերության զարգացումը ռազմական քաղաքականության համատեքստում

ՀՀ պաշտպանական կարողությունների ռազմավարական վերանայման ընթացքում նախաձեռնվել են հիմնարար բարեփոխումներ ռազմարդյունաբերական համալիրում՝ մշակվելով համապատասխան հայեցակարգային փաստաթղթեր: Դրանք անդրադառնում են երկու հիմնական ենթաոլորտների. Առաջին՝ հանրային և մասնավոր ընկերությունների կոնսորցիումի ստեղծում և երկրորդ՝ քաղաքացիական օգտագործման արտադրանքի արտադրության խրախուսում՝ ռազմական արդյունաբերությանն օժանդակելու համար ֆինանսների կուտակման նպատակով: Իրականացվում են նաև հարկման, օտարման մեխանիզմներին և վարկավորմանն օժանդակելուն վերաբերող օրենսդրական փոփոխություններ, օրինակ՝ նոր տեխնոլոգիաների ներդրումը և քաղաքացիական նշանակության արտադրանքը[358]:

Ռազմարդյունաբերական համալիրի մրցունակությունը կախված է ազգային տնտեսության մրցունակության մակարդակից, ինչը որոշիչ է ոչ միայն զենքի, զինամթերքի, զինված հակամարտության պայմաններում կիրառվող տեխնիկական միջոցների արտադրության, այլև տրանսպորտի և հաղորդակցությունների աշխատանքի կազմակերպման, մատակարարման համակարգերի, զինված ուժերի գործողություններում անհրաժեշտ ենթակառուցվածքների կատարելագործման, ՌԱՀ ձեռնարկությունների աշխատանքի արտադրողականության և մասնագիտական պատրաստվածության մակարդակի համար: Ընդսմին, գնալով կրճատվում են ռազմական տեխնիկայի հերթական սերունդի ժամկետները, ինչը լուրջ մարտահրավերների առջև է կանգնեցնում Հայաստանի ռազմական արդյունաբերությանը:

ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իսրայելի և այլ երկրների փորձը վկայում է, որ, օրինակ, ռազմական ուղղվածության մեքենաշինության արտադրանքի (ինքնաթիռների, զրահատանկային տեխնիկայի, շարժիչների, ռազմատրանսպորտային միջոցների)

---

[357] **Городецкий А.,** Экономические и институциональные проблемы развития ОПК в годы реформ (1990-2000е годы). Инновации N 8 (178), 2013, С. 8-18, https://cyberleninka.ru/article/n/ekonomicheskie-i-institutsionalnye-problemy-razvitiya-opk-v-gody-reform-1990-2000-e-gg.

[358] Լրացուցիչ տե՛ս «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2015/23, 22.04.2015, http://www.arlis.am:

սերնդափոխությունը միջին հաշվով կարող է կազմել հինգից տասը տարի, ռազմական էլեկտրոնիկայի արտադրանքի (կրակի կառավարման ավտոմատացված համակարգեր, ռադիոտեխնիկական սարքերի) համար՝ երկուսից երեք տարի: Ըստ որում, ինքնին հասկանալի է, որ դրանց նոր մոդելների մշակումը պահանջում է ավելի երկար ժամանակահատված: Օրինակ՝ կապի բորտային ռադիոէլեկտրոնիկայի սարքավորման (չորրորդ և հաջորդ սերնդի) հիմնական բաղադրիչների մշակումը պահանջում է հինգից ութ տարի, ինչն էականորեն ավելացնում է նոր տեսակի կիրառության ժամկետները՝ մինչև դրա բարոյական մաշվածությունը[359]:

Այնուամենայնիվ, նոր տեխնիկական միջոցների ներդրման անհրաժեշտ նախապայմաններից մեկը փորձանմուշից դեպի սերիական արտադրության անցումն է, որն ամբողջովին պայմանավորված է երկրի տնտեսական հնարավորություններով: Իսկ վերջինս իր հերթին կապված է համապատասխան տեխնոլոգիաների իրացման համար պահանջվող որոշակի ծախսերի հետ:

Հայաստանի պարագայում մասնավորապես ակնհայտ է, որ գնի բարձր կամ ցածր մակարդակը չի կարող արդարացնել սպառազինության որևէ տեսակից կամ բաղադրիչից կախվածությունն արտերկրից, եթե դրա համարժեքը հնարավոր է արտադրել տեղում: Խոսքը վերաբերում է ինչպես անօդաչու սարքերին, այնպես էլ փամփուշտներին և զինամթերքի այլ տեսակներին: Մասնավորապես՝ միայն փամփուշտների մասով փորձագիտական ուսումնասիրությունները վկայում են, որ մեկ թշնամու սպանելու համար միջին հաշվով կրակում են մի քանի տասնյակից մինչև մի քանի տասնյակ հազար, իսկ երբեմն՝ հարյուր հազար փամփուշտ: Գուցե նման հաշվարկները չափազանցված են, սակայն ոսկերչական ճշտությամբ դրանք որևէ մեկին չի հաջողվում ներկայացնել: Մի բան ակնհայտ է. ցանկացած պատերազմ չափազանց ծախսատար երևույթ է: Այն սովորաբար ծանր բեռ է դառնում տնտեսության համար, եթե «սպասարկվում է» ձեռնարկությունների մի մասի ռազմականացման կամ հարկերի բարձրացման հաշվին:

Ի վերջո, ինչպես ամեն ապրանք ու ծառայություն, ամեն արհավիրք ու աղետ, պատերազմը նույնպես ունի իր գինը: Եվ դրա հաշվարկն ամենևին էլ տնտեսագիտության դասական սահմանումներով կատարվող գնի հաշվարկը չէ: Հետևաբար ռազմական հակամարտության ու պատերազմի գինը, բնականաբար, սրանով չի կարող սահմանափակվել: Կարևոր է հաշվի առնել նաև պատերազմի սոցիալական գինը, ներքին ու արտաքին քաղաքական բաղադրիչը, ժողովրդագրական խնդիրը, բարոյական ու հոգեբանական ասպեկտը և այլ հաշվառելի ու աներևույթ գործոններ: Ուստի դրա առանձնահատկություններին հարկ է անդրադառնալ միայն խորը և բազմակողմանի մասնագիտական ուսումնասիրություններից ու դիտարկումներից հետո:

Ռազմական քաղաքականության համատեքստում ռազմարդյունաբերության դերին ու նշանակությանն անդրադարձ է կատարվում նաև ՀՀ զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագրում[360]: Մասնավորապես՝ որպես 5-րդ նպատակ ներկայացված է կայացած ռազմարդյունաբերական համալիրը, որտեղ նշվում է, որ այդ համալիրի կայացման, տնտեսության թռիչքային առաջընթացի և զինված ուժերի համակողմանի արդիականացման ապահովման համար առանցքային նշանակություն ունի ոլորտային տնտեսության զարգացումը, որի խնդիրը պետք է լինի պետության և զինված ուժերի ռազմատնտեսական կարիքների բավարարումը և

[359] **Борисович К.,** Моральное старение техники (вопросы методологии и теории), М., 1997, С. 26, http://www.referun.com/n/moralnoe-starenie-tehniki-voprosy-metodologii-i-teorii#ixzz4WYzicioT.

[360] Հաստատված ՀՀ նախագահի 2018 թվականի փետրվարի 17-ի թիվ ՆՀ-103-Ա հրամանագրով, http://mil.am/files/LIBRARY/7-amya/cragir/ՀՀ/ԶՈՒ/2018-2024/թվականների/արդիականացման/ծրագիր.pdf:

պատերազմի վարման տնտեսական ապահովումը: Արդիականացման ծրագրում ընդգծվում է այն առաջնահերթությունը, որ համալիրի զարգացման նպատակով նախատեսվում է իրականացնել ոլորտում ներդրումների խթանման և համատեղ ձեռնարկությունների ստեղծման քաղաքականություն՝ հարկային և վարչարարական ընթացակարգերի բարելավման, օտարերկրյա ներդրումների ներգրավման և հանրային, մասնավոր ու միջազգային կոոպերացիայի սկզբունքով համատեղ ձեռնարկությունների ստեղծման միջոցով, ինչպես նաև կարևորվում է համալիրի կողմից երկակի և քաղաքացիական նշանակության ապրանքների արտադրական կարողությունների ստեղծումը:

Ամփոփում

Այսպիսով՝ ազգային անվտանգության ապահովման հետ կապված տնտեսական հարաբերությունները կարգավորող կանոնների, նորմերի և ինստիտուտների վերլուծությունը թույլ է տալիս դուրս հանել այս ոլորտում ձևավորված մի շարք օբյեկտիվ հակասություններ: Դրանք պայմանավորված են տնտեսական համակարգի ձևավորված մոդելի ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացին ռազմատնտեսական հարաբերությունների ոչ բավարար հարմարեցմամբ:

Նման պայմաններում կարևորվում է ռազմատնտեսական հարաբերությունների պետական կարգավորման արդյունավետության բարձրացման նպատակով պետական ինստիտուտների կողմից ռազմատնտեսական համակարգի կարգավորման արդյունավետ գործիքակազմի կիրառումը: Անհրաժեշտ է ռազմատնտեսական գործընթացների կարգավորման հարուստ գործիքարան, ռազմատնտեսական անվտանգության, ինչպես նաև իր բոլոր ոլորտներում և ղեկավարման մակարդակներում ռազմատնտեսական գործունեության չափանիշների և ցուցանիշների համակարգի ձևավորում: Այս առումով քաղաքական-իրավական ինստիտուտները, հատկապես ռազմական տնտեսության զարգացման տեսանկյունից պետք է ձևավորվեն ընդգծված նպատակայնությամբ տեղական ինքնակառավարման, պետության, քաղաքացիական հասարակության կողմից:

MAIN ISSUES OF ENSURING THE ECONOMIC COMPONENT OF MILITARY POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA

NORIK NORIKYAN

National Academy of Sciences, Philosophy,
Sociology and Law Institute, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia

The aim of the study is to present the main problems of the economic foundations of military policy and to ensure a competitive institutional model. The tasks arising from this goal are: to study the foundations of the process of institutionalization of the military economy, to analyze the reforms of the economic foundations of the defense sector of the Republic of Armenia, and also to identify the impact of the economic component and the industrial complex on the provision of military policy.

In the course of the study, dialectic and systemic methods of a general nature were widely used, as well as methods of private, concretized meaning: political and legal analysis, comparative, systemic, and statistical evaluation.

Analyzing the institutional foundations of the development of the military economy of the Republic of Armenia and the factors necessary for its development, it can be concluded that the construction of an effective system of interaction between the state and the private sector involves

the definition of many measures: assessment, planning and implementation, providing comprehensive tools for regulating military-economic processes.

Key Words: *Security, military policy, armed forces, economy, military-industrial complex, planning, management, competitiveness, modernization.*

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ ОБЕСПЕЧЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ СОСТАВЛЯЮЩЕЙ ВОЕННОЙ ПОЛИТИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НОРИК НОРИКЯН
соискатель Института философии, социологии и права
Национальной Академии Наук РА,
г.Ереван, Республика Армения

Целью исследования является представление основных проблем экономических основ военной политики и обеспечения конкурентной институциональной модели. Задачами, вытекающими из этой цели, являются: изучить основы процесса институционализации военной экономики, проанализировать реформы экономических основ области обороны РА, а также выявить влияние экономической составляющей и промышленного комплекса на обеспечение военной политики.

В ходе исследования применялись широко используемые в научных кругах диалектические и системные методы общего характера, а также методы частного, конкретизированного значения: политико-правовой анализ, сравнительная, системная, статистическая оценка.

Анализируя институциональные основы развития военной экономики РА и факторы, необходимые для ее развития, можно сделать вывод, что построение эффективной системы взаимодействия государства и частного сектора предполагает определение многих мер: оценку, планирование и реализацию, обеспечение комплексного инструментария для регулирования военно-экономических процессов.

Ключевые слова: *безопасность, военная политика, вооруженные силы, экономика, военно-промышленный комплекс, планирование, управление, конкурентоспособность, модернизация.*